ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ
(XVIII դարի սկիզբ – 1923 թ.)

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

XVIII դարի սկզբներին Կ.Պոլսի հայ գաղթօջախն ապրում էր որակական փոփոխությունների մի շրջան, որ պայմանավորված էր և՛ ներքին, համայնքային կյանքի, և՛ օսմանյան Թուրքիայի ներքաղաքական ու տնտեսական զարգացումներով: Նախ, պետությունը սկսեց խիստ վերահսկողություն իրականացնել քաղաքային բնակչության միջուկը կազմող՝ արհեստավորության, նրա արտադրության հումքի և արտադրանքի իրացման նկատմամբ: Թուրքիայում խոր արմատ գցած ավատատիրական հարաբերությունները, ամենուրեք իրենց զգալ տվող կրոնական ու ազգային հակասությունները մեծապես արգելակում էին երկրի տնտեսական զարգացումը, դանդաղեցնում արդեն լուրջ ճաքեր տված ռազմահողատիրական համակարգի փլուզումը: Օսմանյան պետությունը ևս - ջանքեր էր գործադրում պահպանելու այդ համակարգը, հատկապես արգելելու կամ նվազեցնելու տնտեսապես քայքայված գյուղացիության հոսքը դեպի մեծ քաղաքներ: XVIII դ. հրապարակված օրենքներով (1710, 1731, 1741, 1748, 1782 և այլն) վարչական խիստ միջոցներ էին ձեռնարկվում այդ ուղղությամբ[1]: Այս քայլերը հետամտում էին գյուղատնտեսական հումքի ապահովումը արհեստավորական արտադրանքի համար, ինչպես և էսնաֆ արտադրողների արդյունքների իրացման գեթ նվազագույն պայմանների պահպանությունը: Իր հերթին, դա դանդաղեցնում էր երկրի և՛ տնտեսական սրընթաց անկումը, և՛ տնտեսական հարաբերությունների զարգացումները՝ ստեղծելով մի տեսակ հավասարակշռություն տնտեսական հնամենի կարգուկանոնի ու այն վիճարկող նոր իրողությունների միջև: Հողի վարձակալական համակարգի որակական ընդլայնումները, որ մեծապես կաշկանդում էին գյուղատնտեսության զարգացումը, իրենց կնիքը դրեցին նաև Կ.Պոլսի հայ հանրության սոցիալական նկարագրի վրա: Հումքի պակասը, ի վերջո, էսնաֆի մեջ պետք է հասցներ նրա վերնախավի ու հասարակ արտադրողի, վաշխառուական կապիտալի և մանր ու միջակ առևտրականության միջև եղած հակասությունների բևեռացմանը:

Օսմանյան կայսրության մեջ միլեթների, այդ թվում և հայ հանրության նկատմամբ պետության քաղաքականությունը որոշվում էր նշված՝ զարգացման ներքին գործոններով: Հարկահավաքման անցնցում ապահովումը՝ հենված միլեթների ավանդական կրոնադավանական ու վարչական կառուցվածքի վրա, ոչ մահմեդականների անմռունչ ենթարկումը գերակա իսլամի դրվածքին և այն դավանող տիրապետողների քաղաքական ու տնտեսական զորությանը, մնում

[1] М. С. М е й е р. Османская империя в XVIII веке. М., 1991, с. 39.

էին վերոհիշյալ քաղաքականության անկյունաքարն ամբողջ XVIII դարում: Եվ դարձյալ, այս վերջինի հարատևումն ապահովելու համար օսմանյան պետությունը շահագրգռված էր պահպանելու միլեթների միատարրությունը, անդորրը դրանց ներսում, որպես նրանց հետ երկխոսության ավանդական նախապայման: Կար նաև եվրոպական աճող էքսպանսիայի տագնապահարույց խնդիրը: Օսմանյան Թուրքիան Եվրոպայի հետ առճակատված հակադրության մեջ պարտություններ էր կրում, բայց և բուն երկրի ներսում շարունակում էին դրսևորվել այդ ձախողումների հետևանքները: Հայտնի են Թուրքիայի տնտեսական զիջումները եվրոպական տերություններին, կապիտուլյացիաների համակարգի աստիճանաբար ընդլայնումը հօգուտ այդ տերությունների, որոնց քաղաքական զուգահեռներն այս վերջիններն իրականացնում էին և՛ Բալկաններում, և՛ Թուրքիայի ասիական տարածքներում: Նկատի ունենք օտար կրոնադավանական ներթափանցումները միլեթների մեջ, որպիսիք ուժ և խորություն էին ստանում արտաքին ուժերի ռազմական ճնշումների ու հաջողությունների համեմատ: Հայ հանրության մեջ վերոհիշյալ ներթափանցումը Եվրոպան իրականացնում էր կաթոլիկական (հետագայում նաև ավետարանական, որ հույն համայնքի մեջ, ի դեպ, ծայր էր առել դեռևս XVI դ.) դավանական քարոզչության և ազդեցության հզորացմամբ: Օսմանյան պետությունը նախընտրում էր դրան դիմակայել միլեթների դավանական միասնականության ու վարչական կազմակերպության միջոցով, այսինքն՝ այն լծակով, որին տիրապետում էր անառարկելիորեն: Եվ այստեղից՝ Բ. դռան նոր, կենտրոնացված քաղաքականությունը միլեթների, այդ թվում և հայ համայնքի կրոնական ու վարչական կազմակերպության նկատմամբ, տվյալ դեպքում՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքության նկատմամբ:

XVIII դ. սկզբին Կ.Պոլսի պատրիարքությունը շարունակում էր ցնցվել դավանական հակասությունների պատճառով, որոնք մերթ պրկվում, մերթ թուլանում էին նաև արտաքին քաղաքական ճնշումների պայմաններում: Պատրիարքները, ներշնչվելով Բ. դռան հակաեվրոպական, հակակաթոլիկական ուղեգծից և հաճախ՝ նրա ուղղակի թելադրանքով, կտրուկ միջոցների էին դիմում հայ կաթոլիկների դեմ: Դեռևս նախորդ դարից շարունակվող՝ պատրիարքների արագ փոփոխությունների հիմքում հիմնականում ընկած էին այս՝ դավանական ներհակությունները, որոնցով էլ պայմանավորված էին XVII դ. վերջին ու XVIII դ. սկզբին Մելքիսեդեկ Սուպհիի, Եփրեմ Ղափանցու, Ավետիք Եվդոկիացու և այլոց միջև պատրիարքական աթոռի համար հյուսվող սադրանքներն ու պայքարը: Դրամատիկական վախճան ունեցավ Ավետիք Եվդոկիացու գործունեությունը, որ հաճախ շեշտված սրություն էր ստանում կաթոլիկների և սրանց հայ հետևորդների դեմ: Դրանից սաստիկ անհանգստացած՝ հայադավանների զորությունը ընկճելու նպատակով, արկածախնդրական գործողություններ ձեռնարկեց ֆրանսիական դեսպան Ֆերիոլը, որի հրահրումներով 1706 թ. սկզբներին Ավետիքը պաշտոնանկ արվեց, աքսորվեց Թենեդոս կղզի, ապա առևանգվեց և տարվեց Սիցիլիա, այնուհետև Ֆրանսիա, Մարսել ու Փարիզ՝ որպես Բաստիլի կալանավոր: 1710 թ. Ավետիքն ընդունում է հռոմեադավանություն և քահանա

ձեռնադրվում: Վախճանվել է 1711 թ.[2]: Բ. դուռը, հատկապես Չորլուլու մեծ վեզիրը, փորձում էին որևէ կերպ վերադարձնել Ավետիքին, սակայն Ֆերիոլին հաջողվեց կորցնել տալ նախկին պատրիարքի հետքերը: Օսմանյան իշխանությունների խստություններն այս անգամ ևս փլվեցին իրենց՝ հայերի վրա: Ի պատասխան Ավետիքի առևանգման, Կ. Պոլսում հալածանքներ սկսվեցին հայ լատինադավանների դեմ: Ձերբակալվեցին շուրջ մեկուկես տասնյակ հայեր, որոնց մեջ՝ նախկին պատրիարք, հանրաճանաչ լատինասեր Մատթեոս Սարբն և Երեմիա Քյոմուրճյանի եղբայր Կոմիտաս քահանան: Առաջինը գլուխն ազատեց առերես ուրացությամբ, իսկ երկրորդը՝ հավատի և համոզմունքի տեր մարդ, գլխատվեց 1707 թ. հոկտեմբերի 25-ին[3]:

1706 թ. հետո Ավետիքին փոխարինած և բավականաչափ դժգույն պատրիարքներին (Մարտիրոս Քյուլհանճի, Սահակ Ապուչեխցի, Հովհաննես Գանձակեցի) հաջորդեց Հովհաննես Կոլոտը (1715–1741): Կոլոտով սկսվում է Կ. Պոլսի պատրիարքության զորեղացումը ոչ միայն Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում, այլև ողջ համազգային կրոնական կենտրոնների մեջ հեղինակության շեշտակի բարձրացումով: Կոլոտի ժամանակ նկատելի են դրական որոշակի փոփոխությունները նաև կրթական-մշակութային, տեսական-դավանական, Երուսաղեմի պատրիարքության նյութական ու հոգևոր ամրապնդման, հայ-հունական հարաբերությունների և այլ բնագավառներում: Հատկապես կարևոր էր Կ. Պոլսի պատրիարքության՝ թեմերում ամրապնդվելու իրողությունը: Մի որոշ չափով Կոլոտի գործունեությանը նպաստեցին օսմանյան ներքին ու արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Ռազմական պարտությունները եվրոպական տերություններից, Բալկաններում զգալի դարձած ռուսական և ավստրիական նկրտումները, կայսրության հպատակ ժողովուրդներին ազատագրական շարժումներից հեռու պահելու ձգտումը և, վերջապես, եվրոպական քաղաքակրթության սպառնալիքներից խուսափելու ջանքերը (որ դրսևորվում էին այդ նույն քաղաքակրթության պտուղները ինչ-որ չափով յուրացնելու ճիգերով և որոնք ավելի ակնառու էին դառնալու դարավերջին, թուրքական վերնախավին ստիպում էին լիբերալ որոշ քայլերի դիմել: Դեռևս Նևշեհիրլի Իբրահիմ փաշայի (հայկական ծագմամբ մեծ վեզիր՝ 1718-1730 թթ.)[4] ժամանակ թուրքերը հիմք դրեցին իրենց գրատպությանը, եվրոպական տեխնիկական դարակազմիկ մի երևույթ, որ դրանից առաջ նրանք համարում էին սրբապղծություն: 1720 թ. Ահմեդ Գ-ի օրոք 80 հոգանոց թուրքական մի պատվիրակություն մեկնեց Ֆրանսիա՝ ծանոթանալու այդ երկրի արվեստներին ու տեխնիկական նվաճումներին[5]: Թույլ, բայց և նկատելիորեն ուրվագծվում էր եվրոպական ազդեցությունը թուրքական վերնախավի շրջանում: Մեղմացումներն ի հայտ եկան այնպիսի ասպարեզում ևս, որպիսին եկեղեցիների նորոգման արտոնություններն էին, որտեղ մինչ այդ թուրքերը հատկապես անզիջում

---

[2] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3135-3234:*

[3] *Նույն տեղում, էջ 3190-3192:*

[4] *Գ. Ա յ վ ա զ ո վ ս կ ի. Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Բ, Վենետիկ, 1841, էջ 193:*

[5] А. Д. Н о в и ч е в. История Турции. I, эпоха феодализма. Л., 1963, с. 250.

էին՝ սկսած Ֆաթիհի ժամանակներից: Կոլոտին հաջողվեց, այս կերպ, 1720–1730-ական թվականներին նորոգել Սամաթիայի Ս. Գեորգ, Օրթաքյոյի Ս. Աստվածածին, Ղալաթիայի Ս. Լուսավորիչ, Պալաթի Ս. Հրեշտակապետ և այլ եկեղեցիներ[6]: Նորոգվեց նաև Երուսաղեմի Ս. Հարության տաճարը: Ս. Գեորգի և Ս. Հրեշտակապետի վերաշինությունն իրականացրել էր Մահտեսի Մելիտոն Արապօղլու ճարտարապետը, իսկ Ս. Լուսավորչինը՝ Մահտեսի Սարգիսը: Վերջին եկեղեցու պատերը պատկերազարդել էր նկարիչ Եսային, պալատի նկարիչ Բարսեղի եղբայրը[7]: Ի դեպ, այս նույն ժամանակներում էր գործում հայ ճարտարապետ Շիրին խալֆան՝ 1730-ականի կեսերին արքունի շինությունների վերակացուն[8]:

Կոլոտի ժամանակ կարգավորվեցին Կ.Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունները Երուսաղեմի պատրիարքության հետ: Գրիգոր Շղթայակիր վարդապետի գործակցությամբ նա արմատապես բարելավեց Ս. Հակոբյանց վանքի կարգավիճակն ու կառավարումը: Երուսաղեմի պատրիարքությունը բաժանվեց Կ.Պոլսի պատրիարքությունից՝ ազատվելով հոգևոր և աշխարհիկ բախտախնդիրների շահատակություններից, որի պատճառով Երուսաղեմի վանքն ընկել էր ծանր պարտքերի տակ[9]: Երուսաղեմի պատրիարք ընտրվեց Գրիգոր Շղթայակիրը (1715), որը մեծապես նպաստեց վանքի և պատրիարքության բարեկարգմանը: 1726 թ. Կոլոտը հրապարակեց Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ կանոնները, որով ապահովվում էին պատրիարքության ինքնուրույնությունն ու առանձին տեղը հայ կրոնական կենտրոնների մեջ: Մի որոշ չափով Կոլոտը կարողացավ կարգավորել նաև Երուսաղեմում հայ-հունական հարաբերությունները: Նախ, հույն հոգևոր վերնախավի հետ փոխադարձ համաձայնությամբ կանխվեցին 1729 թ. ծռազատկի հնարավոր բախումները հայերի և հույների միջև: Սակայն դրանից հետո ծայր առավ Երուսաղեմում հայ-հունական սեփականատիրական վեճը (այսպես կոչված, «հաբեշական ժառանգության» և Ս. Տեղյաց այլ տարածքների շուրջ)՝ կողմերի փոփոխական հաջողություններով: Այսուհանդերձ, դրանք ավարտվեցին հույների հավակնությունների մասամբ բավարարմամբ. 1740 թ. ֆերմանով հաբեշական սեփականությունները մնացին հույների ձեռքին[10]: Հայերի հաջողությունները կրոնակից հույների հետ հարաբերություններում՝ նշանակալիորեն պայմանավորված էին Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի լայնախոհությամբ և ճկուն գործելակերպով: Հայտնի է հատկապես վերջինի շրջահայաց վերաբերմունքը հայ կաթոլիկների նկատմամբ, որ նպաստեց դավանական հակասությունների մեղմացմանը հայ հանրության ներսում,

---

[6] *Գ. Բ ա մ պ ո ւ ք ճ յ ա ն. Հովհաննես պատրիարք Կոլոտ (1678-1741), Ստանպուլ, 1984, էջ 41, 47, 51, 95:*

[7] *Նույն տեղում, էջ 52-58:*

[8] *Մ. Չ ա մ չ ե ա ն. Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 807:*

[9] *Յ ո վ հ ա ն ն է ս Հ ա ն ն ա. Գիրք պատմութեան..., Կ. Պոլիս, 1782, էջ 107:*

[10] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3382: Հունական տեսակետը տե՛ս «Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի պատմություն հունաց և տարաձայնության» գործը (Երևան, 2008), որի թարգմանությունը բնագրով կատարել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բարթիկյանը:*

ինչպես և նրա սահմաններից դուրս: Այս ամենն աննախընթաց չափերով մեծացրեցին Կ.Պոլսի պատրիարքության հեղինակությունն ու համբավը հայ եկեղեցու նվիրապետության մեջ: Կոլոտը գործուն մասնակցություն ունեցավ Էջմիածնի կաթողիկոսի ընտրության գործում, այն կազմակերպելով Կ. Պոլսում՝ կաթողիկոս ընտրվեց Գաղատիայի առաջնորդ Կարապետ Ուլնեցին (1726): Իր ընտրության հաջորդ օրը, փետրվարի 28-ին, Ուլնեցին արքեպիսկոպոս օծեց իրեն՝ Կոլոտին ընդգծելու Կ. Պոլսի պատրիարքության նշանակալիությունը[11]:

Կ.Պոլսի այս պատրիարքը որակապես նոր փուլ էր բաց անում արևմտահայ մտավոր և կրթական կյանքի զարգացման մեջ: Մխիթար Սեբաստացու հետ Կոլոտը մինչ այդ չտեսնված չափերով ընդլայնեց համազգային հոգևոր հաղորդակցությունը եվրոպական մտավոր մշակույթի հետ: Նրա որոշմամբ ու խրախուսանքով ծավալվեց կրոնադավանական ու փիլիսոփայական և բնագիտական թարգմանական երկերի տպագրությունը: Երեք տասնամյակի ընթացքում, մինչև 1740-ական թթ. սկիզբը, Կոլոտը Կ.Պոլսում հիմնեց նոր տպարաններ: 1715 թ. նրա հիմնած՝ Սկյուտարի դպրոցում դասախոսում էին ինքը՝ պատրիարքը, լեզվագետ ու թարգմանիչ Ղուկաս Խարբերդցին և Գասպար Սեբաստացին: Կրոնական բնույթի առարկաների հետ այս դպրոցում (հետագայում՝ մայր դպրատուն) դասավանդվում էին նաև աշխարհիկ փիլիսոփայական գիտություններ, տրամաբանություն և քերականություն: Ի դեպ, 1725–1728 թթ. այստեղ տպագրվեցին Սիմեոն Ջուղայեցու Քերականությունը և Տրամաբանությունը[12]: Հայ հեղինակներից 1719–1730-ական թթ. տպագրվեցին նաև Զենոբ Գլակ, Փավստոս Բուզանդ, Առաքել Սյունեցի, Պաղտասար Դպիր և այլն: Մտավոր և մշակութային այս շարժումը, որի հիմնադիրը Կոլոտն էր, իր հետագա զարգացումը գտավ նրա աշակերտի և պատրիարքական աթոռին հաջորդողի՝ Հակոբ Նալյանի (1741–1749, 1752–1764) ժամանակ: Նալյանը հռչակված էր իբրև աստվածաբան, նա հեղինակել է մի շարք գործեր՝ «Վէմ հաւատոյ» , «Մեկնութիւն Նարեկի», «Զէն հոգեւոր», և այլն, գրել է 1762 թ. Զմյուռնիայում հրատարակված՝ Եզնիկի աշխատության առաջաբանը: Նալյանը, ինչպես և Կոլոտը, խրախուսում էր Կ.Պոլսի հայկական տպարանների գործունեությունը (Աստվածատուրի, սրա զավակ Հովհաննեսի, Մ. Սարգսյանի, Գաբրիել Դպրի և այլոց տպարանները): Նա հիմնեց Կում կափուի՝ վերոհիշյալ մայր դպրատունը, հարստացրեց Կոլոտի ժամանակից գործող գրադարանը: Այս պատրիարքի ժամանակ էլ ավելի մեծացավ Կ.Պոլսի պատրիարքության ազդեցությունն ազգային եկեղեցում, հատկապես էջմիածնական գործերի, նաև՝ կաթողիկոսական ընտրությունների վրա: Այս վերջին դեպքում պատճառը, հավանաբար, Կոլոտի ժամանակից սկիզբ առած նախադեպն էր, ինչպես և այն, որ Նալյանը բավական ազդեցություն ուներ պոլսեցի հայ մեծահարուստների և այնտեղ բնակություն հաստատած արևելցի (պարսկահայեր) վաճառականների շրջաններում: Նալյանի նախաձեռնած ժողովում, 1753 թ. Էջմիածնի կաթողիկոս ընտրվեց Աղեքսանդր Բյուզանդացին, երեք տարի անց՝

---

[11] *Հ ր ա ն տ Ա ս ա տ ո ւ ր. Կ. Պոլսի հայերը և իրենց պատրիարքները, «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչի հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1901, էջ 130-131:*

[12] *Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Պատմություն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1946, էջ 576-577:*

1756 թ., Սահակ Ահագինը, որն այդպես էլ չմեկնեց Էջմիածին: Եվ դարձյալ, 1759 թ., Նալյանի նախագահությամբ Կ.Պոլսում գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս ընտրեց Հակոբ Շամախեցուն[13]:

Նույն ճկուն վերաբերմունքն էր ցուցաբերում Նալյանը հայ կաթոլիկների նկատմամբ, ինչ Կոլոտը, և այս իրողությունը առավել գնահատելի է հռոմեադավան հայերին մշտապես սաստելու հակամետ՝ Բ. Դռան անփոփոխ պատրաստակամության պայմաններում:

Որքան էլ ազդեցիկ, այսուհանդերձ, Նալյանի, թվում է, սահուն պատրիարքական կառավարումը մթագնվեց պոլսեցի որոշ մեծահարուստների սադրանքներով: Կաշառքի ուժով ստանալով թուրքական պաշտոնյաների հավանությունը, սրանք խուժեցին մայր եկեղեցի և պատրիարք հռչակեցին Երուսաղեմի միաբաններից ոմն Պրոխորոնի: Սակայն հուզված ժողովուրդը չընդունեց այս դրածոյին, որը պատրիարքական աթոռին մնաց ընդամենը մեկ շաբաթ: Հ. Նալյանն ընտրվեց Երուսաղեմի պատրիարք, ապա 1752 թ. վերստին ստանձնեց Կ.Պոլսի պատրիարքի պաշտոնը՝ մեծահարուստ Յաղուպի զորեղ աջակցությամբ:

Կ.Պոլսի պատրիարքության համազգային կրոնական դիրքերը նշանակալիորեն թուլացան Գրիգոր Պասմաճյանի պատրիարքության օրոք (1764–1773) և դրանից հետո, XVIII դ. վերջին քառորդին: Բուն իսկ պոլսահայ համայնքում դրամատիրական նոր խավի՝ ամիրայության հանդես գալով սրվեց ներքին պայքարը հին ունևոր վերնախավի՝ վաճառականության ու վաշխառու-չելեպիների և մյուս կողմից՝ նորահայտ սեղանավոր-ամիրաների միջև: Հայ հանրության մեջ առաջատար տեղի համար մղվող այս պայքարում XVIII դարի 2-րդ կեսից ամիրաները պետք է գերազանցեին վերնախավի մյուս շերտերին, որոնք, սակայն, հեշտությամբ չէին զիջում դիրքերը և որն արտահայտվում էր պատրիարքական աթոռին յուրային եկեղեցականի նստեցնելու շարունակական ձգտումով: Պրոխորոնի միջադեպը, ամենայն հավանականությամբ, այս պայքարի դրսևորումներից մեկն էր: Ներհակ խմբակցությունները ձգտում էին պատրիարքի միջոցով տնօրինել համայնապատկան եկամուտները, առաջին հերթին՝ վակֆների կառավարումը և, առհասարակ, նյութական հնարավորություններն առարկայականի վերածել՝ պաշտոնների, հեղինակության ու բարեկեցության համար: Զնականորեն այս ամենը, պետության օրենքներով, որոնք վերաբերում էին միլեթներին տրված առանձնաշնորհումներին, իրականացնում էր պատրիարքը: Դեռևս Ֆաթիհի ժամանակներից միլեթների ղեկավարները (հույն, հրեա, հայ) համատեղում էին կրոնական և աշխարհիկ գործառույթները, գրեթե նույնպիսի՝ այս տարբեր սկիզբները միավորող իրավասություններով, ինչ ունեին օսմանյան բարձր աստիճանավորները՝ կադիները, ենիչերիների գլխավորները, գավառական փաշաները և այլն, ընդհուպ մինչև սուլթան, որը մարմնավորում էր կրոնական՝ հոգևոր և աշխարհիկ գերագույն իշխանությունը:

Գրիգոր Պասմաճյանին տրված՝ Մուստաֆա Գ-ի բերաթում (1764) նշված են նորընծա պատրիարքի իրավունքներն ու պարտականությունները, որտեղ կրկնվում էին ավանդական սահմանումները, հավանաբար, չնչին փոփոխութ-

[13] *Մ. Չ ա մ չ ե ա ն. նշվ. աշխ., էջ 864-866:*

յուններով: Պասմաճյանն այստեղ անվանվում է Կ.Պոլսի, Ռումելիի և Անատոլիայի հայ համայնքի պատրիարք, որ նա, ինչպես և նախորդ պատրիարքները, գանձարանին է տրամադրել 100.000 աքչե փեշքեշ (միանվագ) և պարտավորվել, որ տարեկան հարկ է տալու 140.000 աքչե: Նրան էին ենթարկվելու պատրիարքության հոգևորականները՝ առաջնորդից մինչև քահանա և, առհասարակ, հայ համայնքի բոլոր մարդիկ: Նա էր նշանակելու պաշտոնները իր համայնքում և վճռելու վակֆները տնօրինելու հարցերը, համայնքի անդամների ծնունդի, կնունքի, պսակի, կտակների ու նվիրատվությունների վերաբերյալ օրինական ամրագրումները: Պատրիարքն օժտվում էր ոչ միայն կրոնական ծիսակատարությունները խախտողներին, այլև եկեղեցու սեփականության նկատմամբ քրեական հանցանք կատարած հոգևորականներին պատժելու իրավունքով: Շարիաթական սանկցիան չէր կարող կիրառվել պատրիարքին ենթարկվող հանրության որևէ անդամի նկատմամբ՝ առանց նրա իմացության: Պատրիարքն ուներ անարգել և անմաքս երթևեկելու իրավունք, նա, ինչպես և իր կափու քեհյան (սենեկապան) ու մեկուկես տասնյակի չափ հոգևորական մերձավորներն ազատվում էին ջիզյեի (գլխահարկ), ավարիզի (պատերազմական հարկ) և թեքյալիֆի (սովորութային) հարկերից[14]:

Բերաթի անվերապահ բնույթն իրականում պայմանական նշանակություն ուներ: Մասնավորապես, Արևմտահայաստանում և այլ գավառներում պատրիարքական իրավասությունները մշտապես ոտնահարվում էին տեղական փաշաների, դերեբեյ քրդերի և այլ զորեղների կամայականությունների հետևանքով: Հովհաննես Կոլոտի պատրիարքության ժամանակ, 1740 թ., «Անադոլուի կադիներին» ուղղված մի ֆերմանով սաստվում էին հենց վերոհիշյալ պաշտոնյաները, որոնք անարգել պաշտոնի էին դնում առաջնորդներին, վարդապետներին ու երեցներին՝ տիրանալով եկեղեցիների ու վանքերի սեփականություններին կամ տնօրինում դրանք՝ առանց պատրիարքական վկայագրի[15]:

Ուշագրավ է Գր. Պասմաճյանին տրված այս բերաթի և նրա հաջորդ Զաքարիա պատրիարքին (1773–1781) տրված բերաթի համեմատությունը: Նույնն են մնացել պատրիարքական միանվագ և տարեկան հարկերի չափերը, պատրիարքների իրավունքների ու պարտականությունների սահմանումները: Սակայն և նկատելի են գավառական փաշաների ու այանների կամայականությունների դեմ արքունիքի ու Բ. դռան սաստումների սրացումները՝ ուղղված պատրիարքի իրավասությունների ոտնահարումների դեմ (առանց պատրիարքի իմացության՝ պսակի, կրկնամուսնության երևույթներ): Զգալի է նաև կաթոլիկության դեմ հատուկ ուղղվածությունը, խստիվ արգելքը գավառներում հայ կաթոլիկների՝ եկեղեցիների նկատմամբ հավակնությունների դեմ, բռնազավթումների դեպքում ծանր պատիժներ տալու հրահանգը: Այս երևույթի դեմ հետևողական, բայց և խոհեմ պայքար էին մղել դեռևս Կոլոտն ու Նալյանը: 1740-ականի սկզբներին Նալյանը ստիպված էր դիմել ոչ միայն իշխանություններին, այլև

---

[14] *Ա վ. Փ ա փ ա զ յ ա ն. Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16–19-րդ դարեր), Երևան, 1999, էջ 182-185:*

[15] *Գ. Բ ա մ պ ո ւ ք ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 97-98:*

ֆրանսիական դեսպան Կաստելլանի աջակցությանը, երբ ջանքեր էր գործադրում Անկյուրիայում բռնագրավված եկեղեցիները հայադավաններին վերադարձնելու համար[16]:

Հիրավի, Զաքարիայի պատրիարքության տարիներին, հատկապես 1770-ականի 2-րդ կեսին Բ. դուռն ուժեղացրեց պայքարը կայսրության մեջ կաթոլիցիզմի տարածման դեմ: Ըստ թուրք պատմաբան Ահմեդ Ջևդեթի, պաշտոնական մի զեկուցագրում հայադավանները համարվում են օսմանյան տերության բարեհպատակ համայնք, իսկ հայ կաթոլիկները եվրոպական երկրների հենակետ, որոնք ցանկանում են Եվրոպայի հաղթանակը Թուրքիայում[17]: Տրվելով իշխանությունների սաստկացող ճնշումներին՝ պատրիարք Զաքարիան ծայրահեղությունների հասցրեց խստությունները հայ կաթոլիկների դեմ: Անկասկած, ոչ առանց Բ. դռան կամ արքունիքի թելադրանքի, 1780 թ. նա արգելեց հայ վաճառականներին առևտրական նպատակներով մեկնել Տրիեստի նավահանգիստ: Ավստրիական դեսպանի բողոքից հետո թուրքերը 1781 թ. Զաքարիային հեռացրեցին պատրիարքությունից՝ աքսորելով Բրուսա: Զաքարիան 1782–1799 թթ. դեռ պետք է վերստին վարեր պատրիարքությունը, իսկ առայժմ, դեռևս առջևում էր թուրք-ավստրիական պատերազմը (1788–1791), և սուլթանը պետք է պահպաներ դիվանագիտական պատշաճ կեցվածքը եվրոպացիների աչքին՝ հեռացնելով նրանց համար անհանդուրժելի պատրիարքին:

Կ.Պոլսի հայ պատրիարքների իրավասությունները ավելի ընդարձակվեցին Մուստաֆա Դ-ի ժամանակ (1807–1808), երբ նրանց հանձնվեց (նաև հույն պատրիարքին՝ իր համայնքի ներսում) ջիզյեի (խարաջ) գանձման իրավունքը[18], որ մինչ այդ իրականացնում էին պետական պաշտոնյաները՝ իլթիզամի (վարձակալական համակարգ) սկզբունքով:

XVIII դ. պատրիարքը շարունակում էր վճարել մուքաթաա կամ մախթու հարկը՝ տարեկան հարկը համայնքի բոլոր ծխերից, որ վաղուց ի վեր պահպանում էր իր կայուն չափը և, ինչպես նշվեց, հասնում էր 140.000 աքչեի[19]: Վարձակալական համակարգի ծավալման պայմաններում մուքաթաան գանձելու իրավունքը ևս վաճառվում էր մյուս մյուլթեզիմ-կապալառուներին[20]: Պետք է կարծել, որ հայ ամիրաները ևս անմասն չեն մնացել վարձակալական այս հնարավորությունից՝ մեծացնելով իրենց կարողությունն ու պատրիարքների վրա ունեցած ազդեցությունը: Պատրիարքն էր հաստատում մյութեվելիներին (բերաթի վերահաստատմամբ), որոնք ընտրվում էին համայնքի ժողովում և ստանձնում էին վակֆները կառավարելու եկամտաբեր գործը:

Մյութեվելիներն իրենց փոխանորդներ էին նշանակում եկեղեցականների՝ 4–12 անձանց, որոնք վարում էին եկեղեցական առօրեական գործերը: Այս համա-

---

[16] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 3993-3994:*

[17] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. 1, Երևան, 1961, էջ 240:*

[18] А. Д. Н о в и ч е в. История Турции. II. Ч. 1 (1792–1832). М., 1968, с. 68.

[19] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 220:*

[20] М. С. М е й е р. *Նշվ. աշխ., էջ 157:*

կարգը հարատևեց մինչև 1847 թ. և վերացավ Մատթեոս պատրիարքի ժամանակ[21]: Ավելացնենք, որ մյութեվելիներ հաստատման և պաշտոնաթողության հարցում, սակայն, պատրիարքի իրավունքները սահմանափակ էին, այստեղ շատ ավելի գործունակ էր Ստամբուլի կադին, որին և՛ մեկ, և՛ մյուս դեպքերում հայցադիմումներ (հյոջեթ) էին ներկայացնում հավակնորդները: Հայտնի են Հ. Նալյանի և Գր. Պասմաճյանի ժամանակների (1742, 1761) հայցադիմումները՝ ուղղված կադիին, մյութեվելիների հրաժարականի և նրանց փոխարինողներին հաստատելու վերաբերյալ: Կ.Պոլսի Ս. Գեորգ եկեղեցու վակֆների մյութեվելի Մահտեսի Առաքելի՝ 1769 թ. տարեկան հաշվետվությունից պարզվում է, որ թաղի եկամուտները գոյանում էին վարձակալված խանութից, ձիթենու արհեստանոցից, այլ կալվածքներից և մուրհակներից: XIX դ. հայ համայնքի տված տուրքերը գրեթե անփոփոխ էին մնացել նախորդ հարյուրամյակից: Ն. Վարժապետյան պատրիարքին տված մի ֆերմանում նշվում են արքունի տուրքը, պատրիարքարանի և ողորմության տուրքերը, ինչպես և «պատրիարքութեան հատկացեալ ստակը»[22]:

Մյութեվելիների, ինչպես և եկեղեցականների պաշտոններն ընտրովի էին, չկար նրանց պաշտոնավարության որոշակի ժամկետ: Այս վերջինը կախված էր տարբեր հանգամանքներից՝ ընտրված անձից և նրա հանդեպ համայնքի ու պատրիարքի վերաբերմունքից:

Մայրաքաղաքում (և զանգվածորեն՝ գավառներում) շարունակ խախտվում էին պատրիարքի իրավասությունները: Զաքարիա Կաղզվանցին արգելել էր ոմն կաթոլիկ հայի («ի հեստելոցն»)՝ Գալուստի որդու ամուսնությունը, պայման դնելով, որ նրա ցանկությունը կբավարարվի, եթե վերադառնա հայ եկեղեցու ծոցը: Սակայն Գալուստը սուլթանի մեհտերպաշու (երաժշտախմբի գլխավորը) միջամտությանն է դիմում, որի անառարկելի հրամանից հետո պատրիարքը ստիպված էր զիջել և պսակի հրամանագիր տալ: Այս պատմությունը շարադրող՝ պատրիարքի ազգական Պողոս Կաղզվանցուն մնում էր միայն գոհանալ նրանով, որ հարսանիքի ժամանակ «էլ հուր յանկարծ Աստուածուստ և այրեաց զտունն ամբարշտելոց»[23]:

Պաշտոնյաների կամայականությունների առջև անզոր էին և՛ պատրիարքները, և՛ երևելիները: 1788 թ., ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, բանակի սուր կարիքներից ելնելով, մեծ վեզիր Յուսուֆ փաշան դիմեց միլեթներից հավելյալ դրամ շորթելու ինքնատիպ հնարքի՝ առաջարկեց հայերին, որ բանակին տրամադրեն 1000, հույներին՝ 2000 մարդ «հզօր ի պատերազմի»[24]: Դա մի աննախադեպ քայլ էր, քանի որ քրիստոնյաները մինչ այդ բանակում ծառայելու փոխարեն վճարում էին ավարիզ և քյուրեկճի (նավատորմի համար) հարկերը:

---

[21] *Պ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հնգդարյան հիշատակարան Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ, Ստամբուլ, 1935, էջ 79, 85:*

[22] *Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը, էջ 97-98:*

[23] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 323-324:*

[24] *Նույն տեղում, էջ 334:*

Հասկանալով մեծ վեզիրի հորինած խաղի իմաստը, հայերն ու հույները սակարկում են՝ նշված չափերը հասցնելով համապատասխանաբար 500-ի և 1800-ի, այդքան զինվորների փոխարեն գումար տրամադրելով, որ և տևեց մինչև ռուս-թուրքական և ավստրո-թուրքական պատերազմների ավարտը (1791): Միաժամանակ, մեծ վեզիրը հույներից, հրեաներից և հայերից պահանջել էր արծաթ՝ դրամահատության համար, ըստ որում սահմանվեց կողոպտչական գնման գին, շատ ավելի ցածր, քան արծաթի շուկայական գինն էր: Հետևանքն այն եղավ, որ բավական թվով հայ ոսկերիչներ սնանկացան (ինչպես իրենց այլազգի արհեստակիցներից շատերը) «վասն պակասութեան արծաթոյ»[25]: Անկախ դրանից, Կ.-Պոլսում և ամբողջ երկրում տնտեսության վիճակը միայն անկում էր արձանագրում. 1717–1778 թթ. դուրուշի գնողունակությունը նվազել էր 180 տոկոսով, բրնձի օխան[26] 1727 թ. արժեր 33, 1789 թ.՝ 200 փարա, շաքարը 1739 թ. 24–30 փարայից 1789թ. հասել էր 70 փարայի, ածուխը՝ համապատասխանաբար, 45-ից 100 փարայի և այլն[27]:

XVIII–XIX դդ. պոլսահայ համայնքի ամենամարդաշատ տարրը՝ արհեստավորական - առևտրական էսնաֆը անմիջականորեն կրում էր օսմանյան տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի հետևանքները: Ռազմահողատիրական համակարգի քայքայումը, որ խորանում էր հողատիրական հարաբերությունների լճացումով և արտադրողականության անկմամբ, իր բացասական ազդեցությունը թողեց վակֆի՝ սեփականատիրական հանգուցային ձևի ու դրա իրացման, եկամուտների բաշխման հետագա բնույթի և դրանից ածանցվող գործոնների վրա: Օսմանյան գավառի քայքայումը և այնտեղից դեպի մեծ քաղաքներ արտագաղթող գյուղացիական տարրի հայտնությունը այդ քաղաքներում, և, առաջին հերթին, Կ. Պոլսում, Սալոնիկում, Իզմիրում և այլուր, նոր կենսապայմաններ էին թելադրում արհեստականորեն ուռճացող այդ կենտրոններին: Թվում է՝ շահում էր էսնաֆը, այդ թվում և հայ արհեստավորները, որոնք այդուհետև հանդիպելու էին զանգվածային պահանջարկի, որ պետք է խթաներ արհեստավորական արտադրանքի ծավալումը: Սակայն այդ պահանջարկը հույժ սահմանափակ էր, ճիշտ այնքան, որքան նորեկների գնողունակությունը: Կ.Պոլսի և հատկապես փոքրասիական քաղաքների էսնաֆը տարուբերվում էր հայտնի հակասականության մեջ՝ գյուղատնտեսական արտադրության թույլ զարգացածության պայմաններում պակասում էր գավառից եկող հումքը, իսկ մյուս կողմից, արհեստավորական արտադրանքը՝ սեղմված սպառողական պահանջարկի և հումքի սակավության շրջանակներում, այսուհանդերձ, բավարարում էր շուկան և զարգացման թույլ ազդակներ ստանում դրա պահանջներից: Ճիշտ չէր լինի, այս իմաստով, օսմանյան արհեստագործական արտադրության մեջ միայն անկում տեսնել: Որքան էլ հետամնաց, դանդաղաշարժ և հատկապես անհեռանկար թվացող՝ XIX դ. առաջին տասնամյակների եվրոպական արտադրության հետ անհավասար մրցակցության պայմաններում, օսմանյան արհեստագործա-

---

[25] *Նույն տեղում, էջ 341:*

[26] *Մեկ օխան հավասար էր 1 կգ 283 գրամի:*

[27] М. С. М е й е р. *Նշվ. աշխ., էջ 39-40:*

կան արտադրությունն ու ներքին առևտուրը կարողացան իրականացնել իրենց տնտեսական գործառույթներն ու նշանակությունը: XVIII դ. և դեռ մինչև թանզիմաթ ու դրանից հետո Կ.Պոլսի հայ արհեստավորությունը շարունակում էր պահպանել իր կենսունակությունն ու հասարակական կշիռը: Հայ արհեստավորները գործում էին դեռևս արտադրության խոր մասնագիտացման պայմաններում՝ կորպորատիվ միավորումներում: Դատելով Կ.Պոլսում հայ արհեստավորների բազմաքանակությունից և արտադրանքի բազմազանությունից՝ նրանք միավորված էին և սեփական՝ կրոնադավանական, և մահմեդականների հետ միևնույն կորպորացիաներում: Միջէթնիկական արհեստագործական միավորումներում մշտական երևույթ էր խտրականությունը, որ կիրառում էր էսնաֆի թուրքական վերնախավը հայ և այլադավան մյուս արհեստակիցների նկատմամբ: Այս երևույթը հատկապես ընդարձակվեց ամբողջ XVIII դ. և XIX դ. սկզբներին, երբ ենիչերիները զանգվածորեն խուժեցին արհեստագործական միություններ՝ ամենուրեք զգալ տալով իրենց գերազանցությունը և արտոնությունների իրավունքը «գյավուր» արհեստակիցների նկատմամբ (հարկերից խուսափումը կամ դրանց թեթևացումը՝ ի հաշիվ ոչ մահմեդականների, առօրեական հոգսերը վերջիններիս պարտադրելը և այլն):

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբներին հայ արհեստագործները միավորվում էին արհեստագործական բազմաթիվ կազմակերպությունների մեջ: 1789 թ. վերը նշված՝ արծաթի հարկահանության տակ ընկած մարդկանց մեջ հիշվում են 65, ապա 72 և ավելի մասնագիտության արհեստավորներ, իսկ դրանից առաջ՝ 1750 թ., մի վավերագրում հիշատակվում են 150-ից ավելի մասնագիտության արհեստավորներ[28]: Կ.Պոլսում հայերի արհեստանոցները հայտնի էին իրենց տեղակայման վայրով: XVIII դ. 1-ին քառորդից հետո գրված մի վավերագրում հայ արհեստավորները հիշվում են ըստ բնակության թաղերի կամ վայրերի, որտեղ գտնվում էին իրենց արհեստանոցները՝ «Ղալաթիոյ եւ Պէկօղլուի տիւլկերներն» (ատաղձագործները), «Շահզատէ պաշիի խաֆաֆ (գլխակագործ – Ա. Խ.) էսնաֆքն», «Չաթալ խանի բապուճճիքն» (կոշկակարները – Ա. Խ.) և այլն[29]:

Հայ արհեստավորների շրջանում ևս արտադրությունը իրականացնում էին եռաստիճան համակարգով՝ վարպետ-ենթավարպետ-աշակերտ, որ հիմնականում պահպանվեց նաև XIX դ.: XVIII դ. 2-րդ կեսին արտադրական այս միավորը կրում էր դարաշրջանի սոցիալական բևեռացման կնիքը. արհեստավորական վերնախավի որոշ մասը՝ վարպետները, որ միաժամանակ շուկայում իրացնում էին արտադրանքը, հարստանում էր ի հաշիվ աշակերտների և ենթավարպետների: Այդ վերնախավի հարստացմանը նպաստում էր նրանց արտադրանքի իրացումը՝ սեփական կրպակներում կամ խանութներում: Շուկայում նրանք

---

[28] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 336-338, 321: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 22, էջ 2–5: Ա. Հաճյանը և Մ. Զուլալյանը նշում են, որ XVI–XVII դդ. կաշվի արտադրությունը տրոհվում էր 35 կից մասնագիտությունների, զենքինը՝ 36, ոսկերչականը՝ 29, շինարարականը՝ 44 (տե՛ս* А. Аджян, М. Зулалян. Ремесленное производство в Стамбуле в первой половине XVIII века.– *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1990, էջ 181):*

[29] *Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 247, վավ. 942:*

վճարում էին իհթիսաբ բեսմի *(մունիցիպալ հարկ)*[30]*: Հատկապես որոշակի է դառնում արհեստագործական որևէ արտադրանքի մենաշնորհը կայսրության խոշոր քաղաքներում: Տվյալ տեսակի արտադրանքը վերապահվում էր միայն այս կամ այն կորպորացիային, իսկ նրա արհեստակիցները, առանց նրա թույլտվության կամ համաձայնության, իրավունք չունեին զբաղվելու նույնի արտադրությամբ: Դրա հիմքում ընկած էր առանձին քաղաքների ու շրջանների մասնագիտացումը՝ որոշակի ապրանքների թողարկման հարցում: Օրինակ, Զմյուռնիան ու Ադրիանուպոլիսը՝ կարմիր բամբակյա գործվածքների, Մալաթիան՝ սպիտակ, Իսպարթան՝* բողազի *կոչվող գործվածքի արտադրությամբ և այլն*[31]*: Արհեստավորները նախանձախնդրորեն էին հետևում իրենց մենաշնորհի իրավունքների պահպանությանը: Հայտնի է պոլսահայ թյուլպենտճիների (մետաքսագործներ) խիստ անգիջում դիրքը զմյուռնահայ արհեստակիցների հանդեպ՝ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, երբ այս վերջինները խախտել էին Կ. Պոլսի իրենց ազգակիցների մենաշնորհի իրավունքը: Կաթողիկոսը տնական ջանքեր էր գործադրել հօգուտ «տէրունի» թեմի՝ զմյուռնահայ արհեստավորների և եռանդուն միջնորդել պոլսեցիների առջև*[32]*:*

Մ. Ուբիչինին XVIII դ. վերջի և XIX դ. 1-ին կեսի պոլսահայ համայնքը բաժանում էր չորս դասի՝ կղեր, սարաֆներ (սեղանավորներ), գրական և մասնագիտական դաս, արհեստավորներ ու առևտրականներ[33]*: Բացի հոգևորականությունից, որ ներկայացնում էր եկեղեցին, մյուս բոլոր դասերը մտնում էին պետության կողմից ճանաչված էսնաֆությունների մեջ: Անշուշտ, քաղաքային մանր ու միջակ առևտրականությունից պետք է տարբերել հայ խոշոր վաճառականությանը, որը զբաղված էր լևանտի ապրանքաշրջանառության մեջ՝ Եվրոպայում հրամցնելով հիմնականում Թուրքիայի գյուղատնտեսական հումքը: Բուն պոլսաբնակ վաճառականության կողքին մայրաքաղաքում բավական զգալի էր Թուրքիայի այլ վայրերի, ինչպես նաև արևելահայ վաճառականների ներկայությունը: Սրանք բնակվում էին կամ Կ.Պոլսում իրենց գնած տներում, կամ վայելուչ և հարմարավետ խաներում՝ Կ. Պոլիսը դարձնելով առևտրական կայանատեղի և շատ հաճախ իրենց մասնակցությունը բերելով պոլսահայերի կյանքին (եկեղեցիների նորոգում, պատրիարքների, մյութեվելիների ընտրություն և այլն): Ավանդաբար ճանաչված էր այս, ինչպես կոչում էին նրանց, «եկվոր վաճառականների» իրավունքները պոլսահայ համայնքում:*

Ուբիչինիի դասակարգման մեջ տեղ են գրավում սեղանավորները, այլ կերպ՝ ամիրաների դասը, որ, հիրավի, նոր երևույթ էր XVIII դ. 2-րդ կեսի պոլսահայ իրականության մեջ: Գործառութային իմաստով ամիրաները շարունակությունն էին XV–XVII դդ. չելեպի-վաշխառուների, սակայն գործողության ասպարեզով և նյութական կարողություններով շատ ավելի հզոր ու ազդեցիկ, քան նրանք: Որ-

[30] S. S h a w s. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 1, Cambridge, 1976, p. 180.

[31] M. C. M e y e r. *Նշվ. աշխ., էջ 37:*

[32] *Դիւան հայոց պատմութեան: Ղուկաս Կարնեցի, հ. Ա, 1780-1785: Աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 420, 462, 483:*

[33] M. A. U b i c i n i. Letters on Turkey. Part II. London, 1856, p. 310.

պես սոցիալական նոր խավ, նրանք պարտական էին թիմարի քայքայմանը, թիմարն ամբողջովին կամ մաս առ մաս վարձակալության տալու՝ իլթիզամի *այն աննախընթաց տարածմանը, որ սկիզբ էր առել XVIII դ.: Մայրաքաղաքում հենվելով արքունիքի, բարձրաստիճան պաշտոնյաների, իսկ գավառներում՝ փաշաների վրա ու վայելելով նրանց հովանավորությունը, ամիրաները նրանցից ստանում էին հողի կամ վակֆի վարձակալական իրավունքը, մատչելի գներով տնօրինում այդ սեփականությունների ողջ եկամուտները[34] և փոխարենը առատորեն ֆինանսավորում իրենց հովանավորներին, ընդսմին, բազմապատկելով վարձակալությունից ստացվող իրենց սեփական հարստությունը: Ամիրաների մի մասը, ապահովաբար, հին չելեպիների սերունդն էր, մյուս մասը՝ պետական կապալներով հարստացած էսնաֆի արհեստապետները (որոնց ներկայացուցիչները դեռևս XVII դ. 2-րդ կեսին վարում էին պատրիարքին փոխարինող՝ աթոռակալի պաշտոնը, անգամ բազմել էին պատրիարքի աթոռին՝ ի դեմս Սարգիս Էքմեքճու): Սակայն կար և ամիրաների երրորդ շերտը՝ գավառներից (հիմնականում Ակն, ապա Կեսարիա) Կ. Պոլիս եկած, հիրավի, տաղանդավոր մարդիկ, որոնք կամ հայրենակիցների օգնությամբ (աջակցողների մեջ կարող էին լինել նաև երբեմնի գավառական փաշաները, որոնք տեղափոխվել էին մայրաքաղաք), և կամ էլ սեփական ձիրքի շնորհիվ կարողություն ձեռք բերեցին և դիրքի ու հեղինակության հասան անգամ սուլթանական պալատում: Վերոհիշյալ խմբերից Կ. Պոլսում գոյացավ ամիրայական հարուստ սեղանավորական-դրամատիրական խավը: Առավել ուշագրավը, սակայն, պետական պաշտոնների հասած այն ամիրաներն էին, որոնք ժառանգականորեն (ոչ իրավական սանկցիայով, այլ նախադեպի ուժով) այդ պաշտոնը փոխանցում էին իրենց սերունդներին շուրջ մեկ հարյուրամյակ (XVIII դ. 2-րդ կեսից մինչև XIX դ. 50–60-ական թթ.)[35]: Ամիրաների ժառանգական հեղինակությունն ամրապնդվում էր թեկուզ և ոչ անմիջականորեն՝ օսմանյան հասարակության մեջ ավանդաբար ամրագրված տեղով: Դեռևս 1689-1691 թթ. մեծ վեզիր Քյոփրուլու Ֆազլը Մուստաֆա փաշան օրինականացրել էր ցմահ վարձակալման իրավունքը[36], որ իրավական հիմք էր դառնալու իլթիզամի համակարգի ծավալման, ուրեմն և ամիրայության մի ամբողջ շերտի հետագա հայտնության համար:*

Առավել մեծահարուստ ամիրայական մի քանի տները զբաղեցնում էին բարձր պաշտոններ, դրանցից էին Տատյանները, Տյուզյանները և Պալյանները:

---

[34] *Նույն տեղում, էջ 310:*

[35] *Ժառանգական այս ոչ օրինականացված իրավունքը ի հայտ էր գալիս նաև էսնաֆի ներսում, երբ ընտրովի պաշտոնները հիմնականում փոխանցվում էին նույն գերդաստանի անդամներին: Նույնն ենք տեսնում նաև Կ. Պոլսի հայ համայնքի մյութեվելիների ընտրության ժամանակ, այդ պաշտոնը հորից որդուն կամ մեկ այլ հարազատի անցնելիս: Ընդսմին և մեկ, և մյուս դեպքերում՝ պահպանվում էր նաև ընտրության ամբողջ կարգը: Ն. Իվանովը կարծում է, որ այդպիսի ընտրության գործընթացը ենթադրում էր, որ պաշտոնատար անձինք այդ պաշտոնը զբաղեցնում են ոչ թե իրենց ծագման իրավունքով, այլ շնորհիվ այն խորին հարգանքի, որ վայելում էին նրանց ընտանիքները* (Н. А. И в а н о в. Арабо-османский цех в XV–XVIII вв.– В кн.: Османская империя. Государственная власть и социально-политическая структура. М., 1990, с. 190):

[36] Русский посол в Стамбуле. М., 1985, с. 136.

Տատյան գերդաստանը (Ակնի Կամարակապ գյուղից) ավանդաբար զբաղեցնում էր արքունական բարութչուբաշու (վառոդապետ) պաշտոնը: Իրենց վերելքը նրանք սկսել են 1790-ական թթ., երբ Առաքել ամիրա Տատը տեխնիկական նորամուծություններ մտցրեց վառոդի արտադրության մեջ, ինչպես և հիմնովին բարելավեց Ազաղլրի վառոդարանի արտադրությունը[37]: Հետագայում ևս Տատյանները մեծապես նպաստեցին թղթի, մետաքսի, գենքի և ձուլման արտադրությանը: Օսմանյան արտադրության մեջ նրանք առաջինը արմատավորեցին ժամանակի եվրոպական տեխնոլոգիաները: Զեյթինբուրունում այս գերդաստանի անդամներից մեկը հիմնադրեց առաջին տեխնիկական ուսումնարանը: Վերջին վառոդապետն էր Սիմոն պեյ Տատյանը (1829–1889)[38]:

Փողերանոցի (դրամահատարան) և արքունի ոսկերչապետության պաշտոններն էին զբաղեցնում Տյուզյանները, որոնք սերում էին Տիվրիկից (Սեբաստիա) և Կ.Պոլիս էին եկել դեռևս XVII դ. սկզբից: Տյուզյանների վերելքը սկսվում է Միքայել Տյուզի ժամանակից (1724–1783), որը սուլթան Մահմուդ Ա-ի ոսկերչապետն էր: Պետական փողերանոցի պաշտոնը մինչ այդ զբաղեցնում էին հրեաները և այս պատճառով մի տևական ժամանակ առկա էր մրցակցություն Տյուզյանների ու սրանց միջև: Միքայել Տյուզի որդին՝ Հովհաննես Տյուզը քարերի հղկման գործի համբավված վարպետ էր: Մինչ այդ, թանկարժեք քարերի հղկման և մշակման գործի մենաշնորհը պատկանում էր մահմեդական ակնագործներին: Փողերանոցի մրցակիցների, ինչպես և, հավանաբար, արքունիքում իրենց հմայքից զրկված այս ակնագործների սադրանքներով 1819 թ. օգոստոսի 27-ը աղետի օր դարձավ իրենց ազդեցության գագաթին հասած Տյուզյանների համար (եղբայրներից Գրիգորը փողերանոցի տնօրենն էր, Սարգիսը՝ ոսկերչապետը): Պետական միջոցները յուրացնելու մեղադրանքով եղբայրները ձերբակալվեցին, ապա, քննությունից հետո, նույն թվականի հոկտեմբերի 2-ին գլխատվեցին: Նույն օրը Տյուզյանների Ենիքյոյի ամառանոցում կախեցին նրանց զարմիկներ Միքայելին ու Մկրտչին: Մնացած Տյուզյանները բանտարկվեցին և նրանց ունեցվածքը հարքունիս գրավվեց[39]: Այս գերդաստանի դեմ հալածանքը շարունակվեց նաև 1820 թ., երբ նրանց հովանավորյալ և փողերանոցի պաշտոնում փոխարինած Հարություն Պեզճյանը պաշտոնանկ արվեց ու աքսորվեց Լեմնոս: Միայն 1821 թ. նա վերադարձավ աքսորից և վերստանձնեց իր պաշտոնը: Աքսորված Կարապետ և Հակոբ Տյուզյանները աքսորից վերադարձան փոքր-ինչ ուշ՝ 1822 թ.: 1833 թ. Հակոբը կարգվեց փողերանոցի տնօրեն:

Տյուզյանների շնորհազրկման և աքսորի հետ, անտարակույս, կապ ունեին նրանց պատուհասմանը հետևող ընդհարումները հայադավանների և հայ կաթոլիկների միջև (Տյուզյանները կաթոլիկ էին): Զուր անցան պատրիարք Պողոսի ջանքերը՝ հանդարտեցնելու գրգռված կողմերին ու սրանց նենգ սադրիչներին:

---

[37] *Հ. Ե. Պ ո ղ ո ս յ ա ն. Տատյան գերդաստան.– «Հանդես ամսօրյա», 1964, թիվ 4-6, էջ 258:*

[38] A. Y a r m a n. Osmanlı Sağlık Hizmetlerinde ve Surp Prgiç Ermeni Hastanes Tarihi. Istambul, 2001, s. 79.

[39] *Գ. Մ ե ն ե ւ ի շ ե ա ն. Ազգաբանութիւն ազնուական գարմին Տիւզեանց, Վիեննա, 1890, էջ 30-31:*

Հրահրված ամբոխը՝ պատրիարքի կաթոլիկ դառնալու կեղծ լուրերից գրգռված, նույնիսկ հարձակվեց պատրիարքարանի վրա: Իշխանությունները դաժան դատաստան տեսան հայադավանների հետ՝ նրանց մեղադրելով հուզումներ կազմակերպելու մեջ: Ձերբակալվեցին շատերը, որոնց թվում և ամիրաներ Գր. Սաքայանը, Մ. Արփիարյանը, Պ. Կելկելյանը, Կ. Ազնավուրյանը և ուրիշներ: Գր. Սաքայանը գլխատվեց, իսկ մյուսներն աքսորվեցին Արշիպելագի կղզիներ[40]: Հայ կաթոլիկների դեմ ամբարած իր զայրույթին, որը սնուցվում էր հունական ապստամբությանը սատարող եվրոպական տերությունների հանդեպ թշնամանքից, սուլթանը ելք տվեց այն ժամանակ, երբ հայ կաթոլիկները դիմեցին նրան՝ հայոց պատրիարքարանից անկախանալու խնդրանքով: Սուլթանը ոչ միայն աքսորել տվեց աղերսագրի հեղինակներին, այլև 1828 թ. սկզբներին զանգվածորեն մայրաքաղաքից վտարել տվեց բազմաթիվ հայ կաթոլիկների: Անգլիական և ֆրանսիական դեսպանների ճնշմամբ աքսորից վերադարձած կաթոլիկներին շնորհվեց առանձին համայնք (միլեթ) և ազգային վարչություն կազմելու իրավունք՝ 1830 թ. հունվարի 6-ին[41]:

Տոհմիկ ճարտարապետներ էին Պալյանները, որոնք դեռևս XVII դ. վերջին և XVIII դ. 1-ին կեսին հիշատակներ են թողել պալատի ու հին շենքերի վերակառուցման առիթներով: Հատկապես հռչակվեց ճարտարապետ Մակարի որդի Գրիգոր ամիրան (1764–1831), ապա Կարապետ Պալյանը, որոնց նախագծերով կառուցվեցին բազմաթիվ հասարակական շենքեր, պալատներ, զորանոցներ և այլն: Պալյաններն են կառուցել Դոլմա Բահչեի (Կ. Պալյան, 1856), Բեյլերբեյի (Հակոբ և Սարգիս Պալյաններ, 1864), Յլդըզի պալատները (Սարգիս Պալյան, 1876) և այլն: Ազգային հասարակական աչքի ընկնող գործիչ էր Նիկողոս Պալյանը (1826–1858), որը մեծ երախտիք ունի Ազգային սահմանադրության ստեղծման և դրա ժողովրդավարական հայեցակարգի մշակման գործում:

Ոչ միայն հայ համայնքում, այլև օսմանյան կառավարող շրջաններում ազդեցիկ անձնավորություն էր Հարություն Պեզճյանը՝ 1820–1830-ական թթ.: Պեզճյանը խոշոր ծառայություններ մատուցեց օսմանյան պետությանը, նա կազմակերպեց Ռուսաստանին 1828–1829 թթ. պատերազմի հետևանքով ռազմատուգանքի մի մասի վճարման գործը՝ դրանում ներգրավելով Թուրքիայի սեղանավորներին ու եվրոպական դրամատերերին: Պետությունը մեծապես շահեց նրա նախաձեռնած տնտեսական այն կենտրոնի ստեղծմամբ, որի ձեռքին կենտրոնացվեց վակֆի սեփականությունների փոխանցման կամ վաճառքի գործառույթը: Դրանից շահեցին նաև բոլոր, այդ թվում և հայ համայնքը, որի վակֆային կալվածքներն ազատվեցին վաշխառուների ամայացնող շահատակություններից[42]: Զորեղ ձեռքով Պեզճյանը ուղիներ էր հարթում Կ. Պոլսի ազգային հաստատությունների հաջող ընթացքի համար, նրա ջանքերով ստացվեց Կում կապուի Մայր եկեղեցու վերաշինության արտոնությունը, նորոգվեցին մի շարք այլ եկեղեցիներ: Այս հանդուրժողության պայմաններում Կարապետ պատրիարքի ժամա-

---

[40] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., հ. Գ, էջ 3999-4003*

[41] *Նույն տեղում, էջ 4090-4091, 4096-4098:*

[42] *Նույն տեղում, էջ 4208-4209:*

նակ կառուցվեցին Սկյուտարի Ս. Խաչ և Խասքյոյի Ս. Ստեփանոս եկեղեցիները: Սակայն Պեզճյանի ամենակարևոր գործը մնում է Ս. Փրկչյան Ազգային հիվանդանոցի նոր և հարմարավետ շենքի կառուցումը իր ծախքով (1833)[43]:

Ամիրաները դրական դեր են կատարել Կ. Պոլսի հայության պատմության մեջ, նշանակալիորեն նպաստել նրա նյութական ու հոգևոր կարիքների բավարարմանը թե՛ իրենց անհատական ներդրումներով և թե՛ օսմանյան իշխանություններից ստանալով առավելագույն հնարավորը՝ համայնքի սեփականությունների պահպանման և դրանց եկամուտների հանրօգուտ գործադրման տեսակետից: Թանզիմաթի շրջանում (1839–1876), երբ կայսրության հպատակ ժողովուրդների մեջ նոր դրսևորումներ ստացավ ազգային ինքնագիտակցության զարգացման ընթացքը, ազգային կյանքում ամիրաների միահեծան դարձած իշխանությունը տեղի պետք է տար ազատականացման պահանջներին, ամիրաների կամքը՝ հանրային մղումներին: «Պեզճյանի դարաշրջանով» ավարտվում է Կ.Պոլսի հայության մեջ ամիրաների հմայքի և իշխանության ոսկեդարը: 1840-ական թթ. Սկյուտարի ճեմարանի շուրջ արհեստավորական էսնաֆի և ամիրայության բախումները այդ դարաշրջանի փլուզման վկայությունն էին: Հաջորդ տասնամյակին, 1850-ական թթ. պոլսահայ հանրության մեջ, որպես այս տրամադրությունների և Օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքական կացության արդյունք, ծայր առավ սահմանադրական շարժումը, որը փոխելու էր պոլսահայ ազգային կառույցների ողջ նկարագիրը՝ անցյալ դարձնելով ամիրայության դերն ու նշանակությունը:

Պետությունը, և հատկապես բանակը վերակառուցելուն ուղղված՝ օսմանյան սուլթանների քաղաքականությունն իր կնիքը պետք է դներ Կ.Պոլսի հայ համայնքի կյանքի վրա: Սելիմ Գ-ի ժամանակ (1789–1807) ծայր առած վերակառուցողական քաղաքականությունը մեծ ծախքեր էր պահանջում, որի բավարարման համար բարձրացվեցին հարկերի չափերը և որը, իր հերթին, կասեցնելու էր գյուղատնտեսական արտադրության զարգացումը: Շեշտակիորեն բարձրացան պարենի գները մայրաքաղաքում: 1798–1806 թթ. մսի գինը 12 փարայից հասավ 80-ի, սուրճը՝ 142-ից 400-ի, ալյուրը՝ 12-ից 30 փարայի և այլն[44]: Կ.Պոլսում պարենի շարունակ սրվող խնդիրը թեթևացնելու նպատակով Սելիմ Գ-ը դիմեց այստեղ ապաստանած գավառացիներին արտաքսելու դարավոր եղանակին, որն արդյունք չտվեց: Ընդհակառակը, շարունակվում էր գավառական քայքայված բազմությունների հոսքը դեպի մայրաքաղաք և այլ մեծ քաղաքներ: Ավելին, Կ. Պոլսի հայ բնակչությունը օրինականորեն համալրվեց ենիչերիների ջախջախումից հետո (1826, հունիսի 15), երբ Մահմուդ Բ-ի (1808–1839) հրամանով գավառներից Կ. Պոլիս տեղափոխվեցին 10 հազար հայեր՝ փոխարինելու ենիչերիական հուզումներին մասնակցած հրշեջներին և համալներին[45]:

---

[43] *Տե՛ս «Ընդ. օրաց. Ս.Փրկչի հիվանդ.», Կ. Պոլիս, 1908, էջ 364-365, «Հայաստան», Կ. Պոլիս, 1849, 26 մարտի:*

[44] А. Д. Н о в и ч е в, История Турции. II. Ч. 1 (1792–1832), с. 55.

[45] *Նույն տեղում, էջ 147:*

Թանզիմաթի բարեփոխումները (սկսած 1839-ից) ոչ միայն համընկան, այլև մասամբ խթանեցին պոլսահայ համայնքի հանրային կառուցվածքը և դասային փոխհարաբերությունները դրա ներսում: Դրան նպաստեցին կայսրության նպատակների թեկուզ և զուտ ձևականորեն իրավահավասարության, հարկերի կանոնավոր գանձման, սեփականության իրավունքի հռչակման վերաբերող հաթթերը, վարչական որոշ բարեփոխումներ և այլն: Գավառներում մի հայտնի չափով վերջ տրվեց փաշաների ինքնագլխությանը, հատկապես հարկահավաքման բնագավառում, որ խարխլեց իլթիզամի արատավոր համակարգը: Վերջին հանգամանքները ոչ մահմեդական համայնքներում պետք է թուլացնեին օսմանյան ռազմաբյուրոկրատական վերնախավի, և մասնավորապես, փաշաների հզորությանը կոթնած հայ ամիրաների տնտեսական ուժն ու կարողությունը: 1856 թ., Ղրիմի պատերազմի ավարտից հետո հույն, հայ և հրեա սեղանավորներն առհասարակ կորցրեցին իրենց անփոխարինելի գործառութային նշանակությունը երկրի ֆինանսական համակարգում և արքունիքում: Սկսվում էր նոր՝ եվրոպական երկրներից Օսմանյան Թուրքիայի փոխառությունների դարաշրջանը, որով խորացավ կայսրության տնտեսական կախվածությունը եվրոպական տերություններից: Դրան զուգահեռ, ընթանում էր ոչ մահմեդական համայնքների նկատմամբ, և դարձյալ եվրոպական հարկադրանքով, ոչ մահմեդական համայնքների վարչությունների վերակառուցման գործընթացը: Թուրքիային թելադրված՝ եվրոպական բարեփոխողական շարժումը ի սկզբանե ենթադրում էր կանխել կայսրության ժողովուրդների ազատագրական պայքարը օսմանյան լծի դեմ: 1839-ից սկսած՝ Թուրքիայի պատմությունն ընթացել է այս՝ դրսից *պարտադրված, և դրա համեմատ՝ թույլ ու անարդյունավետ բարեփոխողական շարժման և երկրի* ներսում *զորացող, ենթարկյալ ազգերի ինքնորոշման ձգտումների հակադրության ուղիով:*

Մատթեոս պատրիարքի ժամանակ, 1847 թ., Կ. Պոլսում հաստատվեցին Հոգևոր և Գերագույն ժողովներ (համապատասխանաբար՝ կազմված հոգևորականներից և աշխարհականներից): Գերագույն ժողովում ընտրվեցին ոչ միայն համայնքի վերնախավից՝ ամիրաներ, հարուստ վաճառականներ, այլև արհեստավորներ, իսկ հաջորդ տարիներին՝ նաև Եվրոպայում կրթված մտավորականներ: 1859 թ. Բ. դուռը, ըստ Փարիզի համաձայնագրի (1856, մարտի 30) ոչ մահմեդական համայնքների գլխավորներին հանձնարարեց մշակել ազգային կանոնադրություններ՝ նրանց ներքին վարչության համար: Այդպիսի կանոնադրությունը, Ազգային սահմանադրություն անվամբ, հայ համայնքում ամիրաների ու բարձրաստիճան կղերի դիմադրությունը հաղթահարվելուց հետո և ժողովրդի համառ պայքարի արդյունքում, ընդունվեց 1860 թ. մայիսի 24-ին, ապա խմբագրված տեսքով վավերացվեց Բ. դռան կողմից՝ 1863 թ.:

Սահմանադրությունը հանդես էր գալիս ոչ միայն որպես Կ.Պոլսի, այլև Արևմտահայաստանի և ամբողջ Թուրքիայի հայերի կրթական, լուսավորական, մշակութային կյանքը կարգավորող փաստաթուղթ: Ընտրվեց ազգային կենտրոնական վարչություն՝ ամբողջ ազգի կողմից, իր քաղաքական (քաղաքացիական) և կրոնական ժողովներով: Վերջիններս իրենց իրավասություններն իրականաց-

նում էին խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, կտակների, ազգային հիվանդանոցի) միջոցով: Պատրիարքը հանդես էր գալիս որպես Ազգային ժողովի նախագահ:

Ըստ էության, սահմանադրությունը նախատեսված էր առավել Կ.Պոլսի հայության, քան գավառական բնակչության համար: 1863 թ. սահմանադրությամբ Ազգային ժողովի 140 երեսփոխաններից 100-ին ընտրում էր 150-հազարանոց հայ բնակչությամբ Կ.Պոլիսը, և միայն 40-ին՝ շուրջ 2,5 միլիոնանոց գավառը[46]: Արևմտահայաստանի մի քանի կենտրոններում էր, որ գործում էր սահմանադրությունը: Բայց և իր գործողության ամբողջ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև արևմտահայության ցեղասպանությունը, սահմանադրությունը ոչ մի քաղաքական իրավունք չտվեց հայերին: Գավառներում հատկապես շարունակվում էին քրդական վայրագ հարստահարությունները և ժողովրդին կեղեքում էին օսմանյան պաշտոնատար անձինք ու իշխանությունները: Ազգային սահմանադրությունը դույզն-ինչ չափով չվերացրեց հայերի իրավազրկությունը ամբողջ Թուրքիայում[47]: Սահմանադրությունը գավառներում կիրառելու, ինչպես և դրա գործունակությունը (Ազգային ժողովի ներքին կանոնակարգ, ազգային տուրք, այդ ժողովի որոշումների իրացում) ապահովելու նպատակով ազգային վարչության առջև միշտ ծառացած էր սահմանադրության վերաքննության խնդիրը, որն այդպես էլ չհաջողվեց լուծել: Մյուս կողմից, միանգամայն օսմանիզմի դրույթների ոգով և Բ. դռան թելադրանքով, սահմանադրության մեջ սահմանափակված էր եկեղեցու և պատրիարքի դերն Ազգային ժողովում: Այս երևույթն արտացոլում էր միլեթների ներսում կրոնի ազդեցությունը թուլացնելուն և ապա վերացնելուն ուղղված՝ օսմանիզմի գաղափարախոսության նպատակը, այն է՝ այդ հանրությունները հեռացնել իրենց դավանություններից և նախապատրաստել նրանց օսմանյան զանգվածի մեջ տարրալուծելու գործը:

Մ. Խրիմյանի և նրան հետևած՝ Ն. Վարժապետյանի պատրիարքության օրոք, 1870-ական թթ., Ազգային ժողովը զբաղվել է գավառական հարստահարությունների խնդրով, որը ոչ մի նշանակություն չունեցավ դրանք որևէ չափով նվազեցնելու համար: Ճիշտ այնպես, ինչպես կատարելապես ապարդյուն եղան բարեկարգումների հիմնահարցի քննարկումները (1878-1880): Այս և ազգային ու քաղաքական բոլոր հարցերում՝ Ազգային սահմանադրությունը ի հայտ բերեց իր բովանդակազրկությունը: Այսուհանդերձ, չի կարելի անգիտանալ, որ այն իրավականորեն ձևակերպում էր հայ հանրության և նրա առաջավոր մտավորականության պայքարի արդյունքները՝ ազգային վարչության ազատականացման, նրա մտավոր ու մշակութային զարգացումը ապահովելու տեսակետից: Սահմանադրության իսկ շրջանակներում պատրիարքությունը կարողացավ շարունակել իր ազգապահպան դերը և անխզելի կապերը Էջմիածնի Մայր աթոռի հետ, այս վերջինի միջոցով կամ ինքնուրույն՝ արևելահայության ու գաղթօջախների

---

[46] *Ազգային սահմանադրություն հայոց, Կ.Պոլիս-Սթամպուլ, 1863, էջ 32:*

[47] М. Г. Р о л е н - Ж е к м е н. Армения, армяне и трактаты.– В кн.: Положение армян в Турции. М., 1896, с. 18–19; *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 363:*

իր հայ հանրությունների հետ: Իր ամբողջ կանոնադրական բնույթով հանդերձ, սահմանադրությունը «առաջադիմության մի քայլ էր հին ամիրայական ռեժիմի համեմատությամբ»[48]:

Սահմանադրությունն ընդհատումներով գործել է 1860-ական, ինչպես և 1890-ական թթ., սահմանափակումներով գործադրվել 1900-ական թվականներին: Երիտթուրքական կառավարության տարիներին, մինչև հայերի ցեղասպանությունը, այն արժանացավ նույն ոճրագործ վերաբերմունքին, ինչ ամբողջ արևմտահայությունը:

1909 թ. Ադանայի կոտորածին, ապա դրան հետևած՝ հայկական նահանգներում հայերի դեմ սաստկացած հալածանքներին, բռնություններին, հողազրկման և այլ երևույթներին պատրիարքարանն ու Խառն ժողովը քանիցս արձագանքեցին բողոքներով: Չնայած իշխանությունների սաստումներին, 1911 թ. փետրվարին և դրանից հետո էլ պատրիարքարանը բողոքի ձայն բարձրացրեց մուհաջիրներին հայկական նահանգներում բնակեցնելու, հայերի հողերը, վանքերն ու եկեղեցիները ապօրինաբար բռնագրավելու դեմ[49]: Ազգային վարչությունը և պատրիարքարանն ավելի գործուն դարձան 1912–1914 թթ.՝ Արևմտահայաստանում բարենորոգումների և Հայկական հարցի քննարկման ժամանակաշրջանում: Այս էր այն հիմնական պատճառներից մեկը, որ արդեն 1913 թ. մարտին կառավարությունը դադարեցրեց բանակցությունները պատրիարքարանի հետ՝ ձգտելով մեկուսացնել այն և ոչնչի հասցնել նրա գործունակությունը:

Առաջին աշխարհամարտի մեջ մտած երիտթուրքերը հայերի ցեղասպանության նախաքայլերը սկսեցին նաև Կ.Պոլսի հայության մեջ: Մայրաքաղաքի հայությանը ջլատելու նպատակով նախ զանգվածորեն բանակ գորակոչեցին տղամարդկանց: Նրանք պետք է առանձնացվեին աշխատանքային գումարտակներում և զինաթափվելով՝ ոչնչացվեին: Անտերունչ մնացած պոլսահայ շատ ընտանիքների կանայք և մանուկները վերածվեցին մուրացկանների: Պատերազմ հայտարարելուց ի վեր Կ.Պոլսից հեռացան Համաձայնության դեսպանները, ինչը գործողության ազատություն ապահովեց երիտթուրքերին, իսկ Դարդանելի գործողության ընթացքում (1915) դաշնակիցների ձախողումը այլևս անկասելի դարձրեց ցեղասպանությունը սանձազերծելու նրանց խելացնոր ծրագիրը[50]: 1915-ի գարնանը Կ.Պոլսի հայությունը կտրվեց Արևմտահայաստանից: Փոստը չէր գործում, պատրիարքարանը և ժողովուրդը չգիտեին, թե ինչ սպանդ է պատրաստված գավառահայերի նկատմամբ: Այնուհետև, 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվեցին հարյուրավոր հայ մտավորականներ, որոնց մի մասը տարվեց Չանղրը, մյուս մասը՝ Այաշ: Նրանցից շատ քչերին հաջողվեց ազատվել մահվանից, իսկ մյուսները ոչնչացվեցին աքսորի ճանապարհին կամ հետո: Ապրիլի 26-ին Խառն ժողովի պատգամավորությունը այցելեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային և իր խորին մտահոգությունը հայտնեց հայերի հանդեպ կիրառվող

---

[48] *Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 384:*

[49] Дж. С. Киракосян. Младотурки перед судом истории. Ереван, 1989, с. 143.

[50] *Նույն տեղում, էջ 186:*

բնաջնջման քաղաքականության դեմ: Փաստորեն, արևմտահայությունը հռչակվել էր օրենքից դուրս: 1915 թ. դեկտեմբերի 28-ին վարդապետ Վեհունուն գրած իր նամակում պատրիարք Զավենը հայտնում էր, որ Կ.Պոլսից աքսորվել են 5 հազար գավառացի հայեր[51], որոնք տարվեցին Կոնիա: Ամենայն հավանականությամբ, հերթը պետք է հասներ բուն պոլսահայերին, ինչպես նկատում է ամերիկյան միսիոներ Ջեքսը[52]: Կարելի է կարծել, որ պոլսահայերի մոտալուտ աքսորի նպատակադրումն էր պատճառը, որ Համաձայնության՝ հայերին բնաջնջելու առթիվ հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում «Հավաս» գործակալությունը մեծապես նվազեցնում էր պոլսահայերի թիվը՝ 180-200 հազարից այն իջեցնելով 77.836 մարդու[53]: Համենայն դեպս, 1915 թ. ապրիլից մինչև տարվա վերջ ամեն մի պահի պոլսահայությանը ևս սպառնում էր իրենց հայրենակիցների անագորույն ճակատագիրը կիսելու վտանգը: 1916 թ. սկզբներին միայն, երիտթուրքերը որոշեցին հրաժարվել Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայությանը աքսորելու ու ոչնչացնելու մտադրությունից:

1915-ից ի վեր ոստիկանության խիստ հսկողության տակ գտնվող պատրիարքարանը, այսուհանդերձ, կարողացավ որոշ ազգօգուտ գործեր անել: Պատրիարքը հաջողեց բռնագրավման ենթակա հայկական հաստատությունների՝ բանկերում գտնվող գումարները փոխանցել պատրիարքարանի հաշվին, ինչպես և աքսորված ու կարոտյալ որոշ հայերի ուղարկել կտակային գումարների մի մասը[54]:

1916 թ. կեսին հերթը հասավ պատրիարքարանին: Պատրիարքին ուղղված՝ հուլիսի 28-ի գրությամբ կառավարությունը հայտնում էր, որ «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթերթի այսօրվա համարում տպված «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության կանոնագրություն» հրապարակման համաձայն, այդ կրոնական մարմնին են միացվել Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես և Կ.Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները: Կ.Պոլսի պատրիարքությունը և Ազգային սահմանադրությունը վերացվում էին, կաթողիկոս-պատրիարքը, ինչպես և հունաց պատրիարքության համար էր սահմանված, պետք է գործեր երկու ժողովների գործակցությամբ, միայն կրոնական, դպրոցական և բարեգործական ոլորտում՝ անկախ լինելով Էջմիածնի կաթողիկոսությունից[55]: Պատրիարք Զավենը աքսորվեց Բաղդադ, ապա Մոսուլ: Աքսորից նա վերադարձավ պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, 1919 թ. փետրվարին: Մինչ այդ, վերահաստատվել էր Ազգային սահմանադրությունը (1918 թ. նոյեմբերի 20-

---

[51] Геноцид армян в Османской империи. Сб. документов и материалов, под ред. Нерсисяна М. Г. II-е доп. изд. Ереван, 1983, с. 342.

[52] *Նույն տեղում, էջ 398:*

[53] *Զ ա ւ է ն ա ր ք. Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ: Գահիրէ, 1947, էջ 108:*

[54] *Նույն տեղում, էջ 172, 182:*

[55] *Զ ա ւ է ն ա ր ք., նշվ. աշխ., էջ 192-193:*

ի հրովարտակով)[56] և չեղյալ հայտարարվել վերոհիշյալ՝ կաթողիկոսություն-պատրիարքությունը: Կազմվեցին քաղաքացիական ու կրոնական ժողովներ, որոնք ձեռնամուխ եղան ցեղասպանության և պատերազմի արհավիրքներից ծնված բազմաթիվ դժվարությունները ինչ-որ չափով մեղմելու գործին: Միջագետքում և Սիրիայում ցրված հայ փախստականների մի մասն անցել էր Կիլիկիա, այստեղից էլ՝ Կ.Պոլիս, որոնց միացել էին մայրաքաղաքի շրջակայքի փախստականները: Պոլսահայությունը սրանց, ինչպես և Կ.Պոլսում գտնվող բազմաթիվ որբերին խնամելու նպատակով ստեղծեց «Որբախնամ» և «Տարագրելոց» ընկերությունները (1919 թ. փետրվարին սրանք միացան՝ կազմելով «Հայ խնամատար ընկերությունը»): Ստեղծվեցին որբանոցներ, որոնց էական նյութական օգնություն ցուցաբերեց «Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց» կազմակերպությունը: Զինադադարից հետո, 1919–1920 թթ. Կ.Պոլսում դանդաղ, բայց և զգալիորեն կենդանության նշաններ ցույց տվեց ազգային-հասարակական կյանքը, աշխուժացան կրթական-լուսավորական հիմնարկները, գրատպությունն ու մամուլը: Համաձայնության օկուպացիոն զորքերի վերահսկողությամբ 1919 թ. հունվարին Կ.Պոլսում սկսվեց իթթիհատական ղեկավարության դատավարությունը, իսկ 1919 թ. փետրվարի 12-ին սկսեց գործել ռազմական դատարանը[57]: Երիտթուրքական ղեկավարությունը պետք է պատասխան տար Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայերի համատարած բնաջնջումը իրականացնելու համար[58]: Դաշնակիցների ճնշման տակ ստեղծված այդ դատարանը, սակայն, ակնհայտորեն կրում էր թուրքական քաղաքական ուժերի հակակշռող ազդեցությունը, որոնք ձգտում էին որևէ կերպ նվազեցնել երիտթուրքական, պարագլուխների հանցանքը և մյուս կողմից, ապահովել երիտթուրքական բազմաթիվ հանցագործ գործիչների ձերբազատումը պատասխանատվությունից: Հայտնի է, որ դատարանը հեռակա մահապատժի դատավճիռ կայացրեց Էնվերի, Թալեաթի, Քեմալի, Նազիմի և երիտթուրքական այլ պարագլուխների նկատմամբ: Սակայն թուրքական կառավարության մեջ և գավառներում իշխանության մաս էին կազմում հայերի կոտորածները կազմակերպած կամ իրականացրած բազմաթիվ իթթիհատականներ, որոնք որոճում էին հայերի հանդեպ իրենց բարբարոսական և դեռևս չհագեցած դիտավորությունները: Աստիճանաբար, որտեղ հնարավոր էր, սկսեց թափ առնել հակահայկական քարոզչությունը: 1919 թ. ամռանը կառավարությունը հետաքննություն սկսեց հայ վաճառականների դեմ՝ մեղադրանք ներկայացնելով, որ նրանք փողեր են շահել պատերազմի տարիներին[59]: Ձերբակալություններ սկսվեցին Համաձայնության բանակներում թուրքերի դեմ կռված հայ զինվորների շրջանում: Կ.Պոլսում և գավառներում գործող դատարանները աջ ու ձախ մերժում էին իրենց գույքը վերա-

---

[56] *Ազգային սահմանադրութիւն հայոց, Անթիլիաս, 1908, էջ 45–46: Ըստ Զավեն պատրիարքի, սահմանադրությունը վերահաստատվել էր 1918 թ. հոկտեմբերի 19-ին (տե՛ս Զաւէն արք., նշվ. աշխ., էջ 277):*

[57] Дж. С. Киракосян. *Նշվ. աշխ., էջ 269–270:*

[58] *Նույն տեղում, էջ 271:*

[59] *«Արագած», (Կ.Պոլիս), 1919, թիվ 22, էջ 296:*

դարձնելու համար դիմած հայերի հայցերը՝ խնդիրը կամայականորեն փակելով «մյուրուրուզեման» (վաղեմության) համատարած ձևակերպումով: Իշխանությունները կազմում էին «հորդորիչ հանձնախմբեր», որոնք միանգամայն Աբդուլ Համիդի ոգով, հայերի և այլ հանրությունների ստորագրությամբ գոհունակության հանրագրեր էին կազմում «բարեխնամ կառավարության հայրական խնամքի» վերաբերյալ[60]:

Այս պայմաններում՝ գործող պոլսահայ հաստատությունները կարողացան ինչ-ինչ կապեր հաստատել Հայաստանի նորաստեղծ հանրապետության հետ, թեև պոլսահայության և նրա մտավորականության մի զգալի մասը իր քաղաքական սպասելիքներն առնչում էր Արևմուտքից ակնկալվող՝ Հայկական հարցի լուծման ու հայաբնակ նահանգներում ստեղծվելիք հայկական պետության հեռանկարի հետ: Փարիզի հաշտության կոնֆերանսը (1919 հունվար-1920 հունվար) և ապա Լոզանի կոնֆերանսը (1922 նոյեմբեր–1923 հուլիս) ի դերև պետք է հանեին այդ ակնկալիքները: 1920–1922 թթ. պոլսահայ համայնքին՝ քանակապես մի քանի անգամ նվազած, կորցրած իր երբեմնի համազգային հասարակական և մշակութային փայլն ու նշանակությունը, սպասում էր քեմալական կառավարման մոտալուտ էլ ավելի անշքացնող ժամանակաշրջանը:

АРМЯНСКАЯ ОБЩИНА КОНСТАНТИНОПОЛЯ
(Начало XVIII в. – 1923 г.)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

В первые десятилетия XVIII в., особенно при патриархе Ованнесе Колоте (1715–1741) существенно выросло значение Константинопольского патриархата в армянской церкви и в жизни всего народа. В этот период, как и в десятилетия патриаршества А. Нальяна, в константинопольской армянской общине пережили расцвет школа, культурно-образовательные учреждения. Со второй половины XVIII в. в связи с новыми сдвигами в османской экономике, наряду с сословием ремесленников и купцов появляется новое элитарное сословие амираев. Младотурки 28 июля 1916 г. ликвидировали константинопольское патриаршество: оно было присоединено к киликийскому и ахтамарскому католикосату и иерусалимскому патриаршеству под вывеской католикосат-патриаршество. Оно действовало до поражения Турции в Первой мировой войне и было ликвидировано в дальнейшем (ноябрь 1918 г.), когда были восстановлены прежние религиозные центры и национальная конституция. Эта ситуация, в свою очередь, коренным образом изменилась после провозглашения Турции республикой (1923 г.).

[60] *Նույն տեղում, թիվ 13, էջ 200:*

THE ARMENIAN COMMUNITY OF CONSTANTINOPLE
(The beginning of the 18th century – 1923)

ALBERT KHARATYAN

S u m m a r y

In the first decades of the 18th century, especially in patriarch Hovhannes Kolot's time (1715–1741), greatly rose the importance of patriarchy of Constantinople in the Armenian church and in the life of whole people. During this time and also in Kolot's successor H. Nalyan's decades of patriarchy the school and cultural–educational institutions developed in the Armenian community of Constantinople. Since the second half of the 18th century a new class of elite – amirays had appeared parallel with the craftsmen and traders of the community. On July 28, 1916 the Young Turks, who had realized the Genocide, liquidated the patriarchy of Constantinople. It was united to the catholicossate of Cilicia and Akhtamar patriarchy and the patriarchy of Jerusalem under the name of catholicossate and patriarchy. It functioned till the defeat of Turkey in World War I and then was liquidated in November 1918, when the former religious centres and the national constitution were restored. This situation in its turn changed radically after Turkey was declared a republic (1923).